Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
11-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Միջերկրական ծովի **ավազով** պատված ափին լայն **տափարակի վրա** հրաշեկ արևի շողերից թվում է շնչահեղձ էր լինում եգիպտական չքնաղ քաղաք Ալեքսանդրիան:

Փոթորկի պահերին վեր հառնող ալիքները սուրում էին դեպի քաղաք ահեղամռունչ գալարվելով և անձկությամբ փարվում սեթևեթող **պչրուհուն** ողողելով նրա ափերը: Սակայն արևկա օրերին շառաչը փոխվում էր ախորժալուր խշշյունի ու թվում էր կոհակները մեղմաձայն երգում էին իսկ ծովից փչող սյուքը օրորում նազող գեղեցկուհուն **որ** քամելեոնի պես **երփներանգվելով** շողարձակում էր իր վառվռուն գույները:

Հին ժամանակներում ամռան տոթակեզ մի օր Ալեքսանդրիայից **քառորդ** մղոն հեռու գտնվող Փարոս կղզում վխտում էին սևամորթ ստրուկները հաղթաբազուկ ու պիրկ մկաններով նրանք միջանցիկ **պարանոց** ստեղծելու համար հսկա ժայռաբեկորները գլորում էին դեպի նեղ ջրանցքը **որով** քաղաքը բաժանված էր **կղզուց**: Եգիպտոսի անվանի ճարտարապետ Սոստրատեսը թագավորի **պատվերով** կառուցելու էր լուսատու ջահ մեծ ու երկնասլաց գիշերը ժամանող նավերին **կողմնորոշելու** որ ճանապարհով մոտենան նավահանգստին:

Եվ մի գեղեցիկ օր կղզու հարավարևելյան անկյունում ճարտարապետը մանրազնին ուսումնասիրել էր տեղանքը վեր խոյացավ եռահարկ աշտարակը, **որի** հսկա սյուներին **նստած** էր ութանիստ գմբեթը նրա վերևում ծովերի աստված Պոսեյդոնի բրոնզե արձանը:

Փարոսը նաև դիտաշտարակ էր գմբեթի ներսում տեղադրված հայելիները անդրադարձնում էին լույսը **ինչի շնորհիվ** երևում էին քաղաք մտնող բոլոր նավերը:

Ցավոք իրար հաջորդող երկրաշարժերից ու երկարատև **խոնավությունից** հիմնովին կործանվեց աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը համարվող հրաշք կառույցը:

1. Կետադրի՛ր բնագիրը: (3 միավոր)
2. Գրի՛ր բնագրում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (3 միավոր)
3. Դո՛ւրս գրիր տեքստում գործածված այն բայերը, որոնք ունեն ուղիղ խնդիր լրացում: (2 միավոր)
4. Անհրաժեշտ տեղում գրի՛ր մեծատառով. *հաագայի միջազգային դատարան, պարսից լեզու, գրիգորյան տոմար, շվեյցարական համադաշնություն, հին արևելք, սիամական կատու, մշտ սուրբ առաքելոց վանք, նիդեռլանդների պետական խորհուրդ, սեյշելյան կղզիների հանրապետություն, չինական մեծ հարթավայր*: (1 միավոր)
5. Կազմի՛ր 8 պարզ նախադասություն ***նման, հեռու, արագ, անկախ*** բառերի տարբեր խոսքիմասային արժեքներով՝ նշելով անվանումները: (2 միավոր)
6. Գրի՛ր 4 պարզ նախադասություն ուղղական հոլովի տարաբնույթ կիրառություններով՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը: (2 միավոր)
7. Գրի՛ր **լուտանք, շենշող, քղամիդ, դագանակ, սկիհ, պառնաս, ազոխ, նախանձախնդիր, նշավակել, ատոք** բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (1 միավոր)
8. Բացատրի՛ր **տրոյական ձի, տորիչելյան դատարկություն** թևավոր խոսքերը: Տո՛ւր ծագման հակիրճ մեկնաբանությունը: (1 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն՝ «Միայնակ ծառի մտորումները» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)